



«Հաստատում եմ»

ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի տնօրեն, կ.գ.թ. Խ. Մայրապետյան  
«17» հունիսի 2024 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԾԻՔ

Անուշ Մարտինի Բաբայանի «*Origanum vulgare* L. և *Ocimum basilicum* var. *purpureum* բույսերից անջատված միացությունների կենսաբանական ակտիվությունն ու ազդեցության մեխանիզմները» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Գ.00.04 - «Կենսաքիմիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Աշխատանքը քննարկվել և տրվել է կարծիք ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի գիտխորհրդի նիստում (արձանագրություն թիվ 4, 17 հունիսի 2024 թ.): Նիստին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, գ.գ.դ., Բույսերի սննդառության և արդյունավետության լաբորատորիայի վարիչ Ս.Խ. Մայրապետյանը, գիտական գծով փոխտնօրեն, առաջատար գիտաշխատող, կ.գ.թ. Ա.Հ. Թաղևոսյանը, գիտքարտուղար, ավագ գիտաշխատող, կ.գ.թ. Ա.Ս. Կարապետյանը, առաջատար գիտաշխատողներ, գ.գ.դ. Ս.Ա. Բաբախանյանը, գ.գ.թ. Լ.Մ. Ղալաչյանը, գ.գ.թ. Լ.Է. Հովհաննիսյանը, ավագ գիտաշխատողներ, գ.գ.թ. Ռ.Զ. Սիսեոյանը, Հյուսվածքային մշակույթի լաբորատորիայի վարիչ, կ.գ.թ. Ա.Պ. Վարդանյանը, կ.գ.թ. Ա.Ա. Հակոբջանյանը, կ.գ.թ. Մ.Խ. Դարյադարը, կրտսեր գիտաշխատող Ա.Զ. Ասատրյանը:

Քննարկան ընթացքում հնչեցին հարցեր, որոնց հայցորդը տվեց սպառիչ պատասխաններ: Ելույթ ունեցան ավագ գիտաշխատող, գ.գ.թ. Ռ.Զ. Սիսեոյանը, առաջատար գիտաշխատող, գ.գ.թ. Լ.Մ. Ղալաչյանը, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, գ.գ.դ.,

Բույսերի սննդառության և արդյունավետության լաբորատորիայի վարիչ Ս.Խ. Մայրապետյանը, որոնք բարձր գնահատեցին ներկայացված աշխատանքը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հակաօքսիդանտային և հակամանրէային հատկություններով օժտված բնական ծագման պատրաստուկների նկատմամբ պահանջն ամբողջ աշխարհում աճում է: Այս տեսանկյունից, մեծ հետաքրքրություն են ներկայացնում դեղաբույսերը, որպես կենսակտիվ նյութերի բնական աղբյուր:

Հայցորդի կողմից ներկայացվող աշխատանքում նպատակ է դրվել հետազոտել Հայաստանի ֆլորային բնորոշ *Lamiaceae* ընտանիքին պատկանող *Origanum vulgare* L. և *Ocimum basilicum* var. *purpureum* բույսերի եթերայուղերի և էթանոլային լուծամզվածքների քիմիական կազմը և կենսաբանական ակտիվությունը: Իրականացված աշխատանքն արդիական է և հնարավորություն է տալիս գնահատելու վերոնշյալ դեղաբույսերը որպես հակաօքսիդանտային և հակամանրէային պատրաստուկների հնարավոր աղբյուր:

Ատենախոսության գիտական նորույթը: Հայցորդի կողմից առաջին անգամ ուսումնասիրվել է Հայաստանի ֆլորային բնորոշ *Lamiaceae* ընտանիքին պատկանող *O. vulgare* L. և *O. basilicum* var. *purpureum* բույսերի եթերայուղերի և էթանոլային լուծամզվածքների քիմիական կազմը, դրանց հակամանրէային, մետաղ խելատացնող, հակառադիկալային ակտիվությունները: Գնահատվել է վերոնշյալ բույսերից ստացված եթերայուղերի և էթանոլային լուծամզվածքների թիրոգինազի արգելակման կարողությունը: Ռեակցիոնունակ թիոբարբիտուրաթթվի կիրառմամբ մալոնդիալդեհիդի սինթեզի արգելակման միջոցով բույսերից ստացված էթանոլային լուծամզվածքներում գնահատվել է հակաօքսիդանտային ակտիվությունը: Բույսերի էթանոլային լուծամզվածքների ազդեցությամբ *E. coli* բջիջներում որոշվել է NO-ի քանակը և գնահատվել սուպերօքսիդ դիսմուտազի և կատալազի ակտիվությունները: Էթանոլային լուծամզվածքներում գնահատվել է նաև  $\beta$ -գալակտոզիդազային ակտիվության մոդուլացման ունակությունը:



Ատենախոսության բովանդակությունը և ձևավորման գնահատականը: Անուշ Բաբայանի ատենախոսական աշխատանքը շարադրված է 130 համակարգչային էջի վրա և ներառում է հետևյալ բաժինները. աշխատանքում օգտագործված հապավումները, ներածություն, գլուխ 1. գրական ակնարկ, գլուխ 2. նյութեր և մեթոդներ, գլուխ 3. արդյունքներ և քննարկում, ամփոփում, եզրակացություններ, գրականության ցանկ:

Աշխատանքում օգտագործված հապավումները բաժնում հայցորդը ներկայացրել է ատենախոսության մեջ կիրառվող հապավումները:

Ներածություն բաժնում հայցորդի կողմից ներկայացված է իրականացված աշխատանքի արդիականությունը, իրականացված ուսումնասիրությունների նպատակներն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը և դրա գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Գրական ակնարկ բաժնում հայցորդի կողմից ներկայացված է տեղեկատվություն բնական ծագման կենսակտիվ միացությունների, այդ թվում՝ պոլիֆենոլների, դրանց հակաօքսիդանտային ու պրոօքսիդանտային հատկությունների, բուսական ծագման միացությունների հակամանրէային ակտիվության, բուսական ծագման հակաօքսիդանտների, օքսիդային սթրեսին *E. coli*-ի հարմարվողականության վերաբերյալ, ինչպես նաև տրված է հետազոտման օբյեկտ հանդիսացող բույսերի նկարագրերը:

Նյութեր և մեթոդներ բաժնում ներկայացված է հայցորդի կողմից իրականացված հետազոտությունների մեթոդները և տվյալների վիճակագրական վերլուծության համար կիրառված համակարգչային ծրագրերը:

Արդյունքներ և քննարկում բաժնում ներկայացված է հայցորդի կողմից իրականացված աշխատանքի արդյունքում ստացված տվյալները և դրանց քննարկումը:

Ամփոփում բաժնում հայցորդն ամփոփել է իրականացված հետազոտությունների արդյունքները:

Եզրակացություններ բաժնում հայցորդը թվարկել է գիտական հետազոտությունների հիմնական եզրահանգումները:

Գրականության ցանկ բաժնում հայցորդը ներկայացրել է 158 անուն գրականություն:

Ատենախոսության եզրահանգումները տրամաբանորեն հետևում են իրականացված հետազոտությունների արդյունքներից և հիմնավորված են:

Ատենախոսության գործնական արժեքը: Հայցորդի կողմից իրականացված աշխատանքն ունի զգալի կիրառական նշանակություն: Այն կարող է խթանել *O. vulgare* L. և *O. basilicum* var. *purpureum* բույսերի կիրառությունը սննդի արդյունաբերության, կոսմետիկայի, բժշկության և այլ ոլորտներում:

Սեղմագրի համապատասխանությունը ատենախոսության հիմնական դրույթներին: Հայցորդի կողմից ստացված արդյունքները հրապարակվել են միջազգային և հանրապետական գիտական ամսագրերում և միջազգային գիտաժողովների թեզիսներում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Այնուհանդերձ, աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից: Այսպես.

- աշխատանքում կան որոշ տեխնիկական թերություններ, ուղղագրական սխալներ և ոճային բացթողումներ,
- ատենախոսությունը հարուստ չէ հետազոտության օբյեկտ հանդիսացող բույսերի նկարներով,
- ցանկալի կլիներ հեղինակի կողմից գուգաօններ տարվեր հետազոտված երկու բույսերի միջև:

Եզրակացություն: Հաշվի առնելով վերը նշվածը, կարելի է եզրակացնել, որ Անուշ Մարտինի Բաբայանի «*Origanum vulgare* L. և *Ocimum basilicum* var. *purpureum* բույսերից անջատված միացությունների կենսաբանական ակտիվությունն ու ազդեցության մեխանիզմները» թեմայով թեկնածուական ատենախոսական աշխատանքը ավարտուն գիտագործնական ուսումնասիրություն է: Այն բավարարում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է

Գ.00.04 - «Կենսաքիմիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի գիտխորհրդի նիստում (արձանագրություն թիվ 4, 17 հունիսի 2024 թ.):

Նիստի նախագահ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, գ.գ.դ.,

Բույսերի աննդառության և արդյունավետության  
լաբորատորիայի վարիչ *Ա.Ա. Մայրապետյան*

Ա.Խ. Մայրապետյան

Նիստի քարտուղար, գիտքարտուղար,

ավագ գիտաշխատող, կ.գ.թ. *Ա.Ա. Կարապետյան*

Ա.Ս. Կարապետյան

